ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«25» նոյեմբերի 2025 թ.**

Ժամը 16[30]

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստին ներկա էին՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Օ. Աբրահամյանը - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Սիրունյանը - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Բաղդասարյանը - «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ

Ա. Բախշյանը - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյանը - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

<u>Բացակայում էին՝</u>

Ա. Ավետյանը - Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Բ. Փափազյանը - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Մասնակցում էին՝

Վ. Մատիկյանը - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավար

Ռ. Գալստյանը - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Հ. Խաչատրյանը - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետին փոխարինող

Ա. Գևորգյանը - Խորհրդի քարտուղար

Ա. Հայրումյանը - Խորհրդի քարտուղարության անդամ

Հրավիրվածներ՝

Զ. Միքայելյան - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության պետ

Ս. Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության պետ

Կ. Օսեյան - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետի

Վ. Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի պետ

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի օգնական

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատման ներկայացնելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը հաստատման ներկայացնելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի բյուջետային հայտի նախագծին հավանություն տալու մասին:

4. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատման ներկայացնելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատման ներկայացնելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատման ներկայացնելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատման ներկայացնելու մասին:

Նիստը վարում էր Խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանը**:

Նախագահի առաջարկով Խորհուրդը քվեարկությամբ՝ 7 կողմ ձայնով (միաձայն) հաստատեց օրակարգը:

Խորհրդի համաձայնությամբ **Վ. Մատիկյանը** ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ ԿՏՄ) գործունեության 2026 թվականի տարեկան ծրագիրը:

Նշեց, որ ԿՏՄ 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրի շրջանակում իրականացվել են վերահսկողության արդյունավետության բարձրացմանն ու կրթության որակի բարելավմանը միտված գործառույթներ, որոնք կարող են դիտարկվել որպես ձեռքբերումներ՝

1. 2025 թվականի հունիսի 9-ին ուժի մեջ է մտել «Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» օրենքը (ՀՕ-107-Ն) (այսուհետ՝ օրենք):

Օրենքով ընդլայնվել է տեսչական մարմնի լիազորությունների շրջանակը՝ ներառելով նախադպրոցական, հանրակրթական, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի, ինչպես նաև բարձրագույն մասնագիտական կրթության և նախադպրոցական կրթական ծառայության իրականացման լիցենզիայի առկայության, լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացումը, լիազոր մարմնի կողմից տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի ներկայացումը: Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ներառվել է արտադպրոցական կրթությունը, սահմանվել են նոր՝ **տեսչավորում** և դիտարկում վերահսկողական գործառույթները:

Տեսչավորումը հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում անցկացվող համալիր գործառույթ է՝ ուղղված կրթության բնագավառում պետական քաղաքականության ապահովմանը, կրթության որակի գնահատմանը կամ կրթության կազմակերպման առկա խնդիրների բացահայտմանը, խորհրդատվության տրամադրմանը:

Դիտարկումը սովորողի կրթական իրավունքների պահպանմանն ուղղված գործառույթ է:

2. ԿՏՄ-ն անդամակցել է կրթության տեսչական մարմինների միջազգային կազմակերպությանը, որտեղ անդամակցում են 48 տեսչական մարմիններ, որից 45-ը

եվրոպական երկրներից են: 2025 թվականի նոյեմբերի 21-ին կայացել է քվեարկություն, որի արդյունքում 31 կողմ և 2 ձեռնպահ ձայներով ԿՏՄ անդամակցել է կառույցին: Հայաստանի Հանրապետության հարևան երկրներից կառույցի անդամ է նաև Վրաստանը:

Կառույցը տարեկան կազմակերպում է երեք աշխատաժողով (մարտ–ապրիլ, հունիս, սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին), ինչպես նաև նոյեմբերին անցկացվող Տարեկան գլխավոր ժողովը (General Assembly), որը ներառում է մի շարք թեմատիկ աշխատաժողովներ:

ԿՏՄ-ի համար անդամակցությունը կառույցին կարևոր է մի շարք առումներով, մասնավորապես՝

- մասնակցություն վերահսկողական գործիքակազմերի ստեղծման և թարմացման միջազգային փորձի փոխանակում,
- Տեսչական մարմնի աշխատակիցների վերահսկողական հմտությունների զարգացման նոր հնարավորությունների ստեղծում,
- կրթության ոլորտում տեսչական վերահսկողության տարբեր մոտեցումների վերաբերյալ խորքային տեղեկատվության ստացում և, ըստ անհրաժեշտության, լավագույն փորձի ներդրում:

3. ԿՏՄ-ի պատվիրակությունը աշխատանքային այցով մասնակցել է Վրաստանի LEPL–National Center for Educational Quality Enhancement տարածաշրջանային կառույցի կազմակերպած «Հանրակրթության որակի ապահովում» թեմայով կրթական միջոցառմանը: Այցը ճանաչողական բնույթ էր կրում և նպատակ ուներ խորացնել երկու երկրների կրթական վերահսկողական կառույցների համագործակցությունը: Հայկական պատվիրակությանը հյուրընկալել էր Վրաստանի կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող Կրթության որակի բարձրացման ազգային կենտրոնը:
Այցի ընթացքում կողմերը քննարկել են կրթության որակի ապահովմանը և վերահսկողական մեխանիզմների կատարելագործմանն ուղղված մի շարք հարցեր, անդրադարձել ընդհանուր մարտահրավերներին և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներին:

4. 2024 թվականից ԿՏՄ աշխատակիցները մասնակցում են վերապատրաստման դասընթացներին, 2025 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ԿՏՄ-ի բոլոր աշխատակիցները մասնակցել են «Ժողովների արդյունավետ կազմակերպում և կառուցողական քննարկումների մշակույթ» և «Վերահսկողական գործընթացի արդյունավետություն՝ էթիկայի, օրենսդրական կարգավորումների և էմոցիոնալ ինքնակառավարման համատեքստում» թեմաներով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացված վերապատրաստման դասընթացներին:

5. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ կնքվել է հուշագիր:

Վ. Մատիկյանը ներկայացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում ԿՏՄ կողմից իրականացվել է 56 ստուգում, որից 3-ը՝ ըստ անհրաժեշտության: Իրականացված պլանային

ստուգումները կազմում են 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների 58%-ը, իրականացված ստուգումների՝ 95%-ը:

2025 թվականի առաջին 3 եռամսյակներում ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումներ իրականացվել են 2 հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ՀՈՒՀ) և 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ՄՄՈՒՀ):

ՀՈՒՀ-երում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության 46, ՄՄՈՒՀ-ում՝ 2 խախտումներ, կազմվել է 3 ակտ: ԿՏՄ ղեկավարի համապատասխան կարգադրագրերով տրվել են 17 հանձնարարականներ (16՝ ՀՈՒՀ, 1՝ ՄՄՈՒՀ): Մասամբ է կատարվել ՄՄՈՒՀ-ին տրված հանձնարարականը, կատարվել են ՀՈՒՀ-երին տրված հանձնարարականներից 2-ը:

2025 թվականի առաջին 3 եռամսյակներում պլանավորված կանխարգելիչ և իրազեկման բոլոր գործառույթներն իրականացվել են: Նախադպրոցական կրթության ոլորտում, ըստ ստուգումների տարեկան ծրագրի, ստուգումներ են իրականացվել 15 ՆՈՒՀ-երում, հանրակրթության ոլորտում՝ 26 ՀՈՒՀ-երում, միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 12 ՄՄՈՒՀ-ներում (2 ՄՄՈՒՀ-ի դեպքում ստուգում իրականացվել է թե՛ ըստ միջին մասնագիտական, թե՛ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի): Ստուգված նախադպրոցական ուսումնական հաստատություններից (այսուհետ՝ ՆՈՒՀ) 8-ը մանկապարտեզ է, 7-ը՝ նախակրթարան: Ստուգված ՆՈՒՀ-երից 14-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների 118 խախտումներ: Մանկապարտեզներում իրականացված ստուգման ընթացքում կիրառվել են սյունակաշարեր:

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել է 6 կանխարգելիչ միջոցառում (2՝ հեռավար, 4՝ առկա):

Նախադպրոցական կրթության ոլորտում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով իրականացված ծրագրային 15 ստուգումների արդյունքում արձանագրվել է 118 խախտում: Առկա խնդիրները հիմնականում վերաբերում են՝

- զարգացնող (ֆիզիկական) միջավայրին՝ 35 (30%) խախտում 7 (47%) ՆՈՒՀ-ում,
- համակազմի ձևավորմանը՝ 17 (14%) խախտում 7 (47%) ՆՈՒՀ-ում,
- հաստիքային միավորների անհամապատասխանությանը նորմերին՝ 15 (13%) խախտում 2 (13%) ՆՈՒՀ-ում,
- մանկավարժական աշխատողների մրցույթի ընթացակարգին՝ 15 (13%) խախտում 5 (33%) ՆՈՒՀ-ում,
- մանկավարժական աշխատողների՝ առանց մրցույթի ընդունելությանը՝ 11 (9%) խախտում 3 (20%) ՆՈՒՀ-ում:

Հանձնարարականների 44%-ը (37) վերաբերել են ՆՈՒՀ-ի ֆիզիկական միջավայրը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանեցմանը:

Հանրակրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ 339 (41%) խախտում 25 (96%) դպրոցներում,
- խորհրդակցական մարմինների ձևավորմանը և գործունեությանը՝ 152 (18%) խախտում 20 (77%) դպրոցներում,
- սովորողների ընդունելությանը, տեղափոխմանը և ազատմանը՝ 117 (14%) խախտում 12 (46%) դպրոցներում,
- մանկավարժական աշխատողների նշանակումներին՝ 79 (9%) խախտում 19 (73%) դպրոցներում:

Պաշտոնային պարտականությունների կատարման խախտումների 63%-ը վերաբերել է մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարմանը (բացառությամբ՝ տնօրենի), խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության խախտումների 55%-ը՝ մանկավարժական խորհրդի ձևավորմանը և գործունեությանը, մանկավարժական աշխատողների նշանակման խախտումների 86%-ը՝ ուսուցչի նշանակմանը:

Մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման առավել մեծ թվով խախտումները վերաբերել են գրադարանավարի պաշտոնային պարտականությունների կատարմանը (սյունակաշարի կիրառում), որոնք արձանագրվել են ստուգված դպրոցների 96%-ում (25 դպրոց) և կազմել են ընդհանուր խախտումների թվի 12%-ը (102 խախտում):

Մանկավարժական խորհրդի գործունեության առավել մեծ թվով խախտումները վերաբերել են ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի և հաշվետվության քննարկմանը (ռուբրիկների կիրառում), որոնք արձանագրվել են ստուգված դպրոցների 77%-ում (20 դպրոց) և կազմել են ընդհանուր խախտումների թվի 10%-ը (84 խախտում):

Ստուգված 4 դպրոցներում՝ ԱՈՒԿ ծրագրի շրջանակում՝ դասալսողների ներկայացրած եզրակացությունների, ինչպես նաև սովորողների գրավոր աշխատանքների արդյունքների հիման վրա գնահատվել են նաև ուսուցիչները:

Այս համատեքստում նշված 4 դպրոցներում դասալսումներ են իրականացվել 20՝ հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի 10-ական ուսուցիչների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվել է առնվազն 5 դասալսում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- տնօրենի պաշտոնային պարտականությունների կատարմանը՝ 54 (24%) խախտում 12 (100%) հաստատություններում,
- պետական ամփոփիչ քննությունների կազմակերպմանն ու անցկացմանը՝ 24 (11%) խախտում 9 (75%) հաստատություններում,
- մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի ընթացակարգին՝ 21 (9%) խախտում 5 (42%) հաստատություններում:

Վ. Մատիկյանը նշեց, որ «Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, առաջարկություններ են ներկայացվել՝

- «Տեսչավորման գործընթացում ներգրավված մասնագետներին ներկայացվող պահանջները և ներգրավման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի N 1210-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1139-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1153-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման,
- «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Վարչապետի որոշման,
- «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N 927-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծերի վերաբերյալ:

Լրամշակվել են տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատման ենթակա՝

- տեսչավորման ընթացքում կիրառվող հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական գործընթացի գնահատման ձևաթղթերը,
- նախադպրոցական, հանրակրթական և նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիտարկման ձևաթղթերը,
- ստուգման ընթացքում ստուգաթերթի համապատասխան հարցերը պարզաբանելիս օգտագործող սյունակաշարերը:

ԿՏՄ կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ, դիտարկումներ՝ **87 իրավական ակտերի** վերաբերյալ:

ԿՏՄ-ի 2025 թվականին իրականացված գործառույթները և 2026 թվականի գործունեության տարեկան ծրագրին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ԿՏՄ-ի պաշտոնական կայքում՝ www.eib.am :

Վ. Մատիկյանը ներկայացրեց ԿՏՄ-ի աշխատանքները, որոնք իրականացվելու են 2026 թվականին:

ԿՏՄ-ն 2026 թվականին նախատեսում է.

• նախադպրոցական կրթության և հանրակրթության ոլորտներում իրականացնել տեսչավորումներ (գրավոր առաջադրանքների, թեստերի կամ այլ միջոցներով սովորողների գիտելիքների գնահատում, ուսումնական պարապմունքների (դասերի) լսումներ և այլ):

• իրականացնել դիտարկումներ՝ տեսչական մարմնում ստացված գրավոր տեղեկությունների, դիմումների կամ բողոքների պարզաբանման նպատակով վերահսկողության իրականացում՝ ուղղված սովորողների կրթական իրավունքների պաշտպանությանը:

• լրամշակել տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը՝ ներառելով տեսչավորումը որպես անհատական ռիսկի գնահատման չափանիշ:

• կիրառել հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր ձևաչափով լրամշակված ստուգաթերթերը (ՀՊՁ և Կառավարում ուղղություններով):

• մշակել և փորձարկել նախադպրոցական ուսումնական հաստատությունների ստուգաթերթերը՝ ըստ նոր ձևաչափի:

• մշակել՝

- հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպման ձևաչափ (գործիքակազմ)՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների մասին նրանց իրազեկելու նպատակով:

- կրթության բնագավառում և բարձրագույն կրթության ոլորտում կրթական ծրագրի համապատասխան մակարդակի իրականացման իրավունքի և յուրաքանչյուր որակավորման կամ կրթական ծրագրի աստիճանի լիցենզիայի համար սահմանված պայմանների պահպանման, ինչպես նաև ուսումնական հաստատությունների (բացառությամբ արտադպրոցական կրթության)՝ լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝

օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների հավաստիության նկատմամբ վերահսկողության իրականացման գործիքակազմ:

- նախադպրոցական ծառայությունների և արտադպրոցական կրթության նկատմամբ վերահսկողության իրականացման գործիքակազմ:

• կազմակերպել հանդիպումներ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծնողների, ծնողական խորհուրդների հետ՝ նրանց՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելու նպատակով:

• ցածր կատարողականի արդյունքի գնահատման չափանիշներին համապատասխան արդյունքներ ցուցաբերած ՀՈՒՀ-երում աջակցություն ապահովելու նպատակով իրականացնել իրազեկման աշխատանքներ:

• ազգային փոքրամասնությունների լեզուներով ուսուցում կազմակերպվող ՀՈՒՀ-երում իրականացնել աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ առկա խնդիրների վերհանման և աջակցման նպատակով:

• վերահսկողություն իրականացնել նորակառույց, հիմնանորոգված դպրոցներում՝ հատկացված նոր գույքի (մարզական, լաբորատոր և համակարգչային տեխնիկա) պատշաճ ձևով օգտագործումը (ըստ իրենց կիրառության) պարզելու նպատակով:

• ՀՊՁ-ի (հանրակրթության պետական չափորոշիչ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով երկարօրյա ուսուցում կազմակերպող ՀՈՒՀ-երում իրականացնել վերահսկողություն:

• անդամակցել SICI-ն (Standing International Conference of Inspectorates):

Հարցորդիվ՝ **Վ. Մատիկյանն** անդրադարձավ օրակարգի 2-րդ հարցին՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրին: Ասաց, որ համաձայն 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի կողմից 2026 թվականի ընթացքում ստուգվելու են Հայաստանի Հանրապետության 94 ուսումնական հաստատություններ՝ 60 հանրակրթական, 20 նախադպրոցական, 14 նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:

Համաձայն 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն 60 ՀՈՒՀ-երում: Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

Հայաստանի Հանրապետության 20 դպրոցներում կիրականացվի 4-րդ դասարանների սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատում՝ հանրակրթության պետական չափորոշչով, ինչպես նաև

«Մայրենի» առարկայի առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների, ընթերցանության կարողությունների ձևավորման վրա ազդող խնդիրները վերհանելու նպատակով: Արդյունքները կհամադրվեն ԿՏՄ կողմից նախորդ տարիներին իրականացված նույնաբովանդակ գործընթացի արդյունքների հետ:

Կմշակվի հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպման ձևաչափ (գործիքակազմ)՝ նրանց՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելու նպատակով:

Կիրականացվեն ՀՈՒՀ ստուգաթերթերի և կրթության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Համաձայն 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ 5 ՆՄԱՈՒՀ-ում և 9 ՄՄՈՒՀ-ներում:

• ըստ անհրաժեշտության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողների հաճախելիության մշտադիտարկում (մոնիտորինգ)՝ անակնկալ (առանց նախնական ծանուցման) այցերի (ստուգայցերի) միջոցով, որն ուղղված է ուսումնական գործընթացի ապահովման անհրաժեշտ նախադրյալների՝ ուսանողների հաճախելիության իրական պատկերի բացահայտմանն ու անհարգելի բացակայությունների կանխմանն ու նախականխմանը:

• «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման արդյունքում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների, վարչական աշխատողների կամ ուսանողների համար, ըստ անհրաժեշտության, իրականացնել կանխարգելիչ աշխատանքներ:

• ՆՄԱՈՒՀ և ՄՄՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

Համաձայն 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ կիրականացվեն ստուգումներ 20 ՆՈՒՀ-երում: Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

Վ. Մատիկյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի բյուջետային հայտի նախագիծը:

Խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանն** առաջարկեց 4-ից 7-րդ հարցերը ներկայացնել միասին:

Հ. Խաչատրյանը հակիրճ ներկայացրեց հետևյալ օրակարգային հարցերը՝

4. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

5. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

6. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

7. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Քննարկման ընթացքում խորհրդի անդամները հնչեցրին հարցեր և կարծիքներ, ինչպես նաև խոսվեց որակի ապահովման մեթոդաբանության վերաբերյալ:

Խորհրդի նախագահ **Ժ. Անդրեասյանն** առաջարկեց վերանայել որակի գնահատման մեթոդաբանությունը:

Ամփոփելով նիստը՝ **Ժ. Անդրեասյանն** առաջարկեց քվեարկել օրակարգում նշված հարցերը:

Խորհուրդը՝ 7 կողմ ձայներով հաստատեց և հավանություն տվեց օրակարգի հարցերին:

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2026 թվականի բյուջետային հայտի նախագծին:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

6. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

11/28/2025

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն